

Հավելված

Մաքսային միության հանձնաժողովի
2011 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ
785 որոշման

Փոփոխություններ եւ լրացումներ

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 376 որոշմամբ հաստատված «Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգում»

«Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգում» կատարել հետեւյալ փոփոխությունները եւ լրացումները.

1. 3-րդ կետում «ՄԱՀ-1 համապատասխան վանդակը լրացնելու կարգի II բաժնով սահմանված» բառերը փոխարինել «ՄԱՀ-1 եւ ՄԱՀ-2 համապատասխան վանդակները լրացնելու կարգի II եւ III բաժիններով սահմանված» բառերով:

2. [փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին]:

3. 7-րդ կետի երրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Համաձայնագրի 6-10-րդ հոդվածներով նախատեսված մաքսային արժեքի որոշման մեթոդներով ապրանքների մաքսային արժեքը որոշելիս՝ լրացվում է ՄԱՀ-2-ը (Կարգի 3-րդ հավելված):»

4. 9-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերություններով՝

«ՄԱՀ-2-ը բաղկացած է երկու հիմնական թերթերից՝ առաջին թերթից, որը պարունակում է ապրանքների հայտարարագրում հայտարարագրվող բոլոր ապրանքների վրա տարածվող տեղեկությունները, եւ երկրորդ թերթից, որի մեջ նշվում են այն տեղեկությունները, որոնք օգտագործվում են հայտարարագրվող ապրանքների մաքսային արժեքը որոշելիս, եւ մաքսային արժեքի մեծության

հաշվարկը: Եթե ապրանքների մեկ հայտարարագրով հայտարարագրվում են երեքից ավելի անուն ապրանքներ, ապա ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման համար օգտագործվում են լրացուցիչ թերթեր: Այդ դեպքում, որպես լրացուցիչ թերթ, օգտագործվում է ՄԱՀ-2-ի երկրորդ հիմնական թերթի ձեւաթուղթը:

Երրորդ թերթից սկսած՝ ՄԱՀ-2-ի բոլոր թերթերը համարվում են լրացուցիչ: Լրացուցիչ թերթերի համարակալումն սկսվում է երրորդ համարից (1-ին եւ 2-րդ թերթերը ձեւի հիմնական թերթերն են, 3-րդն ու հաջորդ թերթերը՝ լրացուցիչ):

ՄԱՀ-2-ի առաջին հիմնական թերթը ընդհանուր (միասնական) է Համաձայնագրի 6-10-րդ հոդվածներով սահմանված ապրանքների մաքսային արժեքը որոշելու բոլոր մեթոդների համար: ՄԱՀ-2-ի երկրորդ հիմնական թերթը կարող է լինել հաստատված չորս տեսակներից որեւէ մեկից՝ կախված ապրանքների մաքսային արժեքը որոշելու մեթոդից: ՄԱՀ-2-ի երկրորդ եւ լրացուցիչ թերթերի համապատասխան տարբերակն օգտագործվում է ապրանքների մաքսային արժեքը որոշելու ժամանակ, կիրառելով՝

- նույնական կամ համանման ապրանքներով գործարքների արժեքի մեթոդները՝ Համաձայնագրի 6-րդ կամ 7-րդ հոդվածներին համապատասխան (այսուհետ՝ 2-րդ մեթոդ կամ 3-րդ մեթոդ, համապատասխանաբար), եւ դրանց հիման վրա պահուստային մեթոդը՝ Համաձայնագրի 10-րդ հոդվածին համապատասխան (այսուհետ՝ 6-րդ մեթոդ)։

- հանման մեթոդը՝ Համաձայնագրի 8-րդ հոդվածին համապատասխան (այսուհետ՝ 4-րդ մեթոդ), եւ դրա հիման վրա՝ 6-րդ մեթոդը։

- գումարման մեթոդը՝ Համաձայնագրի 9-րդ հոդվածին համապատասխան (այսուհետ՝ 5-րդ մեթոդ), եւ դրա հիման վրա՝ 6-րդ մեթոդը։

- 1-ին մեթոդի հիման վրա՝ 6-րդ մեթոդը:»:

5. 10-րդ կետում «ՄԱՀ-1-ի հիմնական ձեւի առաջին թերթը» բառերը փոխարինել «ՄԱՀ-1-ի ձեւի առաջին հիմնական թերթը» բառերով, «ՄԱՀ-1-ի հիմնական ձեւի երկրորդ թերթում» բառերը փոխարինել «ՄԱՀ-1-ի ձեւի երկրորդ

հիմնական թերթում» բառերով:

6. [փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին]:

7. II բաժնում՝

«ՄԱՀ» բառերը փոխարինել «ՄԱՀ-1» բառերով.

21-րդ կետում «(Կարգի III բաժին)» բառերը փոխարինել «(Կարգի IV բաժին)» բառերով.

22-րդ կետում՝

«Վանդակ «ԱՏԳ ԱԱ ծածկագիր» բառերը փոխարինել «Վանդակ «ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր» բառերով.

[փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին]:

8. Ավելացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ III բաժին.

«III. ՄԱՀ-2-ը լրացնելու կանոնները

23. ՄԱՀ-2-ը կազմող անձի կողմից վանդակները լրացնելու կարգ.

Վանդակ 1.

Նշվում են արտաքին տնտեսական գործարքի կողմ հանդիսացող օտարերկրյա անձի լրիվ անվանումը (իրավաբանական անձանց համար) կամ ազգանունը, անունը, հայրանունը (ֆիզիկական անձանց համար) եւ գտնվելու վայրի հասցեն.

կազմակերպության համար՝ անվանումը եւ գտնվելու վայրը (հասցեն),

անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ազգանունը, անունը, հայրանունը եւ բնակության վայրը (երկրի կրճատ անվանումը, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան եւ բնակարանի համարը):

Վանդակ 2ա.

Նշվում են տեղեկություններ ապրանքների ներմուծման երկրի այն գործարքի

կողմ հանդիսացող (կամ, միակողմանի գործարքի դեպքում՝ ապրանքներն ստացող) անձի վերաբերյալ, ինչին համապատասխան ապրանքները ներմուծվում են Մաքսային միության մաքսային տարածք.

կազմակերպության համար՝ անվանումը, դրա կազմակերպահրավական ձեւը եւ գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան եւ բնակարանի համարը).

անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ազգանունը, անունը, հայրանունը եւ բնակության վայրը (երկրի կրճատ անվանումը, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան եւ բնակարանի համարը):

Վանդակի վերին աջ անկյունում նշվում է՝

Բելառուսի Հանրապետության համար՝ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ), Ղազախստանի Հանրապետության համար՝ նույնականացման համարը (ՆՀ)՝ կազմակերպության (մասնաճյուղի եւ ներկայացուցչության) ու համատեղ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ դեպքում, կամ անհատական նույնականացման համարը (ԱՆՀ)՝ ֆիզիկական անձի, այդ թվում՝ անձնական ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ դեպքում.

Ռուսաստանի Դաշնության համար՝ հարկ վճարողի նույնականացման համարը (ՀՎՆՀ) եւ «/» բաժանիչ նշանից հետո հաշվառման կանգնեցնելու պատճառի ծածկագիրը (ՀԿՊԾ):

Վանդակի ստորին մասում նշվում է՝

Ղազախստանի Հանրապետության համար՝ գնորդի նույնականացման մաքսային համարը (ՆՄՀ)՝ Նույնականացման մաքսային համարի ձեւավորման դասակարգչին համապատասխան.

Ռուսաստանի Դաշնության համար՝ պետական գրանցման հիմնական համարը (ՊԳՀՀ) կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վերաբերյալ գրառման պետական գրանցման հիմնական համարը (ԱՁՊԳՀՀ):

Վանդակ 2բ.

Վանդակում նշվում են տեղեկություններ ՄԱՀ-2-ը լրացրած անձի վերաբերյալ՝ կազմակերպության համար՝ անվանումը, դրա կազմակերպարավական ձեւը եւ գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան եւ բնակարանի համարը)։

անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ազգանունը, անունը, հայրանունը եւ բնակության վայրը (երկրի կրճատ անվանումը, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան եւ բնակարանի համարը)։

Վանդակի վերին աջ անկյունում նշվում է՝

Բելառուսի Հանրապետության համար՝ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ),

Ղազախստանի Հանրապետության համար՝ նույնականացման համարը (ՆՀ)՝ կազմակերպության (մասնաճյուղի եւ ներկայացուցչության) ու համատեղ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ դեպքում, կամ անհատական նույնականացման համարը (ԱՆՀ)՝ ֆիզիկական անձի, այդ թվում՝ անձնական ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ դեպքում։

Ռուսաստանի Դաշնության համար՝ հարկ վճարողի նույնականացման համարը (ՀՎՆՀ) եւ «/» բաժանիչ նշանից հետո հաշվառման կանգնեցնելու պատճառի ծածկագիրը (ՀԿՊԾ)։

Վանդակի ստորին մասում նշվում է՝

Ղազախստանի Հանրապետության համար՝ այն լրացնող անձի նույնականացման մաքսային համարը (ՆՄՀ)՝ Նույնականացման մաքսային համարի ձեւավորման դասակարգչին համապատասխան,

Ռուսաստանի Դաշնության համար՝ պետական գրանցման հիմնական համարը (ՊԳՀՀ) կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վերաբերյալ գրառման պետական գրանցման հիմնական համարը (ԱՁՊԳՀՀ)։

Վանդակ 3.

Նշվում է մատակարարման պայմանների անվանումը (լատինական պայմանանշաններով)՝ Մատակարարման պայմանների դասակարգչին համապատասխան, եւ աշխարհագրական կետի անվանումը, ելնելով այն տեղեկություններից, որոնք նշված են գործարքն ուղեկցող առետրային փաստաթղթերում, կամ, նման տեղեկությունների բացակայության դեպքում, ելնելով գործարքի կազմակերպման փաստացի հանգամանքներից:

Վանդակ 4.

Նշվում են հայտարարագրվող ապրանքների մատակարարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի համարը եւ ամսաթիվը (օրինակ՝ ապրանքների անհատույց մատակարարման համաձայնագրի համարը եւ ամսաթիվը):

Վանդակ 5.

Նշվում են մաքսային մարմինների կողմից նախկինում ընդունված՝ տվյալ պայմանագրի շրջանակներում ապրանքների նախորդ մատակարարումների նկատմամբ անցկացված ստուգումների վերաբերյալ որոշումներ կամ այդպիսի ապրանքների վերաբերյալ դատական մարմինների որոշումներ պարունակող փաստաթղթերի վավերապայմանները (համարն ու ամսաթիվը): Չեն նշվում 8-րդ վանդակի փաստաթղթերը:

Վանդակ 6.

«X» նշանով նշվում է այն մեթոդը, որն օգտագործվում է հայտարարագրվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար:

1-ին մեթոդի հիման վրա 6-րդ մեթոդով մաքսային արժեքը որոշելիս՝ կատարվում է նշում միայն (զ) դաշտում:

2-5-րդ մեթոդների հիման վրա 6-րդ մեթոդով մաքսային արժեքը որոշելիս՝ միաժամանակ նշում է կատարվում (ե) դաշտում եւ այն դաշտում, որը համապատասխանում է 2-5-րդ մեթոդներից որեւէ մեկին:

Եթե ՄԱՀ-2-ի «Ապրանք թիվ» վանդակներում տարբեր համարների տակ

նշված ապրանքների մաքսային արժեքի որոշման համար օգտագործվում են մաքսային արժեքի որոշման տարբեր մեթոդներ, ապա կատարվում է նշում (է) դաշտում:

Վանդակ 7.

Նշվում է այն պատճառների հակիրճ հիմնավորումը, որոնց հետ կապված անկիրառելի են 6-րդ վանդակում նշված մեթոդին նախորդող բոլոր մեթոդները, ընդ որում, 1-ին մեթոդի համար պարտադիր է Մաքսային միության մաքսային օրենսդրության կոնկրետ դրույթների նշումը, որոնց համապատասխան, դրա կիրառումն անհնարին է. մնացած մեթոդների համար, որպես դրանց կիրառման անհնարինության հիմնավորում, նշվում է համապատասխան փաստաթղթերի եւ տեղեկությունների (դրանց կոնկրետացմամբ) բացակայությունը:

Վանդակ 8.

Նշվում են հիմնական փաստաթղթերի անվանումները եւ վավերապայմանները, որոնք ներկայացված են ի հաստատումն տրամադրված տեղեկությունների՝ ելնելով մաքսային արժեքի որոշման կիրառված մեթոդից:

2-րդ եւ 3-րդ մեթոդներով մաքսային արժեքը որոշելիս՝ նշվում են օգտագործվող փաստաթղթերի վավերապայմանները, որոնց հիման վրա, ըստ 1-ին մեթոդի, մաքսային մարմնի կողմից ընդունվել է նույնական կամ համանման ապրանքների մաքսային արժեքը՝ պայմանագրի, հաշիվ-ապրանքագրի համարը եւ ամսաթիվը, ապրանքների մասին հայտարարագրի եւ մաքսային արժեքի հայտարարագրի գրանցման համարը, որը կազմվել է ՄԱՀ-1-ի ձեւի համաձայն, դրա լրացված լինելու դեպքում:

4-րդ մեթոդով ապրանքների մաքսային արժեքը որոշելիս՝ նշվում են օգտագործվող փաստաթղթերի վավերապայմանները, որոնք պարունակում են տեղեկություններ նախկինում ներմուծված նույնական կամ համանման ապրանքների կամ գնահատվող ապրանքների գնի վերաբերյալ, որով Մաքսային միության միասնական մաքսային տարածքում վաճառվում է ապրանքների համախառն ամենամեծ քանակությունը՝ հաշիվ-ապրանքագրեր, պայմանագրեր

կամ այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են ապրանքի միավորի գինը:

5-րդ մեթոդով ապրանքների մաքսային արժեքը որոշելիս՝ նշվում են այն փաստաթղթերը, որոնց հիման վրա ընդունվում է ապրանքների հաշվարկային արժեքը, ելնելով նրանից, որ այդպիսի փաստաթղթերը համապատասխանում են ապրանքների արտադրության երկրում կիրառվող հաշվապահական հաշվառման ընդհանուր սկզբունքներին:

6-րդ մեթոդով ապրանքների մաքսային արժեքը որոշելիս՝ նշվում են փաստաթղթերի վավերապայմանները, որոնք, 1-5-րդ մեթոդների ճկուն կիրառության վերաբերյալ Համաձայնագրի պահանջներին համապատասխան, օգտագործվում են որպես հիմք՝ այդ մեթոդով գնահատվող ապրանքների մաքսային արժեքի որոշման համար:

Վանդակ 9.

Նշվում է ՄԱՀ-2-ի լրացուցիչ թերթերի թիվը (թերթերի թիվը պետք է համապատասխանի վերջին թերթի՝ 2 անգամ փոքրացված համարին):

Վանդակ 10.

Լրացվում է ՄԱՀ-1-ի 10բ վանդակի լրացման համար նախատեսված կարգով:

2-րդ, 3-րդ մեթոդները եւ դրանց հիման վրա՝ 6-րդ մեթոդը

24. ՄԱՀ-2 ձեւի երկրորդ թերթը՝ 2-րդ, 3-րդ, 6-րդ մեթոդների համար:

Վանդակ «Ապրանք թիվ»

Նշվում է ապրանքի համարը ապրանքների մասին հայտարարագրի համապատասխան վանդակից:

ՄՄ ԱՏԳ ԱԱ մեկ դասակարգման ծածկագրի նշումով մեկ ապրանքային խմբաքանակում պարունակվող տարբեր անուն ապրանքներ հայտարարագրելիս, երբ անհրաժեշտ է նշել տեղեկություններ ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր կամ որոշ ապրանքների վերաբերյալ, նշվում է ապրանքի համապատասխան հերթական

համարը՝ ըստ ցուցակի:

Վանդակ «ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր»:

Նշվում է ապրանքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի:

11-18ա վանդակներում ներկայացված արժեքային ցուցանիշները նշվում են Մաքսային միության անդամ պետության արժույթով:

Վանդակ 11.

Նշվում է նույնական կամ համանման ապրանքներով գործարքների արժեքը, որոնք վաճառվել են Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու համար եւ արտահանվել են Մաքսային միության մաքսային տարածք այն նույն կամ դրան համապատասխանող ժամանակահատվածում, ինչ գնահատվող ապրանքները, այսինքն՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան՝ հայտարարատուի կողմից որոշված եւ սահմանված կարգով մաքսային մարմնի կողմից ընդունված (ՄԱՀ-1 վանդակ 25ա) նույնական կամ համանման ապրանքների մաքսային արժեքը:

Բաժին Բ «Գործարքի արժեքի ճշգրտումներ (+/-)»:

Սույն բաժնում ներկայացվում են 11-րդ վանդակում նշված նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքի (համապատասխան ՄԱՀ-1-ի 25ա վանդակում նշված նույնական կամ համանման ապրանքների մաքսային արժեքի) համապատասխան ճշգրտումները, որոնք ապահովում են նույնական (համանման) ապրանքների ներմուծման պայմանները գնահատվող ապրանքների ներմուծման պայմանների հետ համադրելի տեսքի բերելը:

Ճշգրտումները կարող են լինել ինչպես «+» նշանով, եթե դրանցով ավելացվում է նույնական կամ համանման ապրանքներով գործարքների արժեքը, այնպես էլ՝ «-» նշանով, եթե դրանցով պակասեցվում է նույնական կամ համանման ապրանքներով գործարքների արժեքը:

Նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքի ճշգրտումն արվում է նման ճշգրտումների հիմնավորվածությունն ու ճշտությունը հաստատող եւ

Մաքսային միության մաքսային օրենսդրության պահանջները բավարարող տեղեկությունների հիման վրա:

Վանդակ 12ա.

Նշվում է մեծությունը, որի չափով պետք է պակասեցվի 11-րդ վանդակում բերված նույնական կամ համանման ապրանքներով գործարքների արժեքը ապրանքի միավորի գնի փոփոխության կապակցությամբ (ենթադրվում են այն դեպքերը, երբ պայմանագրին համապատասխան ապրանքների միավորի գինը կախված է ապրանքների վաճառված միավորների քանակից, իսկ գնահատվող եւ նույնական (համանման) ապրանքները վաճառված են այն քանակություններով, որոնք համապատասխանում են ապրանքների միավորի գների տարբեր մակարդակներին):

Վանդակը չի լրացվում, եթե 11-րդ վանդակում նշված է այն նույնական կամ համանման ապրանքներով գործարքների արժեքը, որոնք վաճառվել են, ըստ էության, այն նույն քանակությամբ, ինչ գնահատվող ապրանքները (այսինքն՝ ապրանքների միավորի միեւնույն գնով), կամ բացակայում է փաստաթղթային հիմնավորումը, որ ապրանքների միավորի գինը կախված է այդ ապրանքի վաճառված միավորների քանակից:

Վանդակ 12բ.

Նշվում է մեծությունը, որի չափով պետք է պակասեցվի 11-րդ վանդակում բերված նույնական կամ համանման ապրանքներով գործարքների արժեքն այնպես, ինչպես դա կարվեր, եթե նույնական կամ համանման ապրանքները վաճառված լինեին նույն առետրային մակարդակով, ինչ գնահատվող ապրանքները:

Վանդակը չի լրացվում, եթե 11-րդ վանդակում նշված է այն նույնական կամ համանման ապրանքներով գործարքների արժեքը, որոնք վաճառվել են նույն առետրային մակարդակով (մեծածախ, մանրածախ եւ այլն), ինչ գնահատվող ապրանքները:

Վանդակ 12գ.

Նշվում են.

- Մաքսային միության մաքսային տարածք գնահատվող ապրանքների ժամանման վայրը (աշխարհագրական կետը),

- մինչև Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող ժամանման վայր նույնական կամ համանման եւ գնահատվող ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ծախսերի միջև տարբերությունը:

Վանդակը լրացվում է, եթե, ի տարբերություն նույնական (համանման) ապրանքների, գնահատվող ապրանքները փոխադրվում են այլ երթուղով եւ (կամ) այլ տեսակի տրանսպորտով:

Վանդակ 12դ.

Նշվում է բեռնման, բեռնաթափման կամ փոխաբեռնման եւ մինչև Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող ժամանման վայր նույնական կամ համանման ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) հետ կապված այլ գործողությունների իրականացման ծախսերի եւ գնահատվող ապրանքների մասով նույնանման ծախսերի միջև տարբերությունը:

Վանդակ 12ե.

Նշվում է 12գ եւ 12դ վանդակներում նշված գործողությունների հետ կապված՝ գնահատվող ապրանքների եւ նույնական ու համանման ապրանքների ապահովագրական ծախսերի միջև տարբերությունը:

12դ եւ 12ե վանդակները լրացվում են, եթե գնահատվող ապրանքների հետ կապված համապատասխան ծախսերն էապես տարբերվում են 11-րդ վանդակում նշված՝ նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքի մեջ ներառված ծախսերից:

Վանդակ 13.

Նշվում է 12ա-12ե վանդակներում ներկայացված մեծությունների գումարը:

Վանդակ 14ա.

Նշվում է այն մեծությունը, որի չափով պետք է մեծացվի 11-րդ վանդակում ներկայացված՝ նույնական կամ համանման ապրանքներով գործարքների արժեքը, ապրանքի միավորի գնի փոփոխության կապակցությամբ (հաշվի են առնվում այն դեպքերը, երբ պայմանագրին համապատասխան՝ ապրանքների միավորի գինը կախված է ապրանքների վաճառված միավորների քանակից, իսկ գնահատվող եւ նույնական (համանման) ապրանքները վաճառված են այն քանակություններով, որոնք համապատասխանում են ապրանքների միավորի գների տարբեր մակարդակներին):

Վանդակը չի լրացվում, եթե 11-րդ վանդակում նշված է նույնական կամ համանման այն ապրանքներով գործարքի արժեքը, որոնք վաճառվել են, ըստ էության, այն նույն քանակությամբ, ինչ գնահատվող ապրանքները (այսինքն՝ ապրանքների միավորի միեւնույն գնով), կամ եթե բացակայում է փաստաթղթային հաստատումն այն մասին, որ ապրանքների միավորի գինը կախված է այդ ապրանքի վաճառված միավորների քանակությունից:

Վանդակ 14բ.

Նշվում է այն մեծությունը, որի չափով պետք է մեծացվի 11-րդ վանդակում ներկայացված՝ նույնական կամ համանման ապրանքներով գործարքների արժեքն այնպես, ինչպես դա կարվեր, եթե նույնական կամ համանման ապրանքները վաճառված լինեին նույն առետրային մակարդակով, ինչ որ գնահատվող ապրանքները:

Վանդակը չի լրացվում, եթե 11-րդ վանդակում նշված է այն նույնական (համանման) ապրանքներով գործարքի արժեքը, որոնք վաճառվել են նույն առետրային մակարդակով (մեծածախ, մանրածախ եւ այլ), ինչ որ գնահատվող ապրանքները:

Վանդակ 14գ.

Նշվում են.

- Մաքսային միության մաքսային տարածք գնահատվող ապրանքների ժամանման վայրը (աշխարհագրական կետը),

- մինչև Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող ժամանման վայր նույնական կամ համանման եւ գնահատվող ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ծախսերի միջև տարբերությունը:

Վանդակը լրացվում է, եթե, ի տարբերություն նույնական կամ համանման ապրանքների, գնահատվող ապրանքները փոխադրվում են այլ երթուղով եւ (կամ) այլ տեսակի տրանսպորտով:

Վանդակ 14դ.

Նշվում է բեռնման, բեռնաթափման կամ փոխաբեռնման եւ մինչև Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող ժամանման վայր նույնական կամ համանման ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) հետ կապված այլ գործողությունների իրականացման ծախսերի եւ գնահատվող ապրանքների մասով նույնանման ծախսերի միջև տարբերությունը:

Վանդակ 14ե.

Նշվում է 12գ եւ 12դ վանդակներում նշված գործողությունների հետ կապված՝ գնահատվող ապրանքների եւ նույնական կամ համանման ապրանքների ապահովագրական ծախսերի միջև տարբերությունը:

14դ եւ 14ե վանդակները լրացվում են, եթե գնահատվող ապրանքների հետ կապված համապատասխան ծախսերը էապես տարբերվում են 11-րդ վանդակում նշված՝ նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքի մեջ ներառված ծախսերից:

Վանդակ 15.

Նշվում է 14ա-14ե վանդակներում ներկայացված մեծությունների գումարը:

Վանդակ 16.

Նշվում է նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքը՝

փոքրացված 13-րդ վանդակում նշված գումարով եւ մեծացված 15-րդ վանդակում նշված գումարով:

Եթե նույնական կամ համանման ապրանքները վաճառվել են նույն առևտրային մակարդակով (մեծածախ, մանրածախ եւ այլն) եւ, ըստ էության, նույն քանակությամբ, ինչ գնահատվող ապրանքները, ինչպես նաեւ, եթե բացակայում է դրանցով գործարքի արժեքը ճշգրտելու անհրաժեշտությունը՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 4-6-րդ ենթակետերում նշված գնահատվող եւ համանման ապրանքների մասով ծախսերի միջեւ էական տարբերությունը հաշվի առնելու համար, որը պայմանավորված է դրանց փոխադրման (տրանսպորտային փոխադրման) հեռավորությունների տարբերություններով եւ փոխադրամիջոցների տեսակներով, ապա 16-րդ վանդակում ներկայացվում է 11-րդ վանդակում նշված՝ գործարքի արժեքի մեծությունը:

Վանդակ 17.

Նշվում է ապրանքների քանակը համապատասխան չափման միավորներով (կիլոգրամ, հատ եւ այլն)՝ չափման այդ միավորները նշելով ներկայացված մեծությունից անմիջապես հետո:

Վանդակը չի լրացվում այն դեպքում, երբ գնահատվող եւ նույնական կամ համանման ապրանքների քանակությունը նույնն է: Սույն վանդակում հաշվի չի առնվում 12ա, 14ա վանդակներում նշված ճշգրտումը:

Վանդակ 17ա.

Նշվում է այն նույնական կամ համանման ապրանքների քանակությունը, որոնցով գործարքի արժեքը նշված է 11-րդ վանդակում:

Վանդակ 17բ.

Նշվում է գնահատվող (հայտարարագրվող) ապրանքների քանակությունը:

Վանդակ 18ա.

Նշվում է գնահատվող ապրանքների մաքսային արժեքը, որը հաշվարկվում է՝ 16-րդ վանդակում նշված մեծությունը բազմապատկելով 17բ վանդակում

ներկայացված մեծության եւ 17ա վանդակում ներկայացված մեծության հարաբերությամբ:

Եթե 17-րդ վանդակը չի լրացվել, ապա օգտագործվում են 16-րդ վանդակի տեղեկությունները:

Վանդակ 18բ.

Նշվում է 18ա վանդակում ներկայացված՝ գնահատվող ապրանքների մաքսային արժեքը, որը վերահաշվարկվել է ԱՄՆ դոլարով՝ մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագրի գրանցման ամսաթվի դրությամբ գործող համապատասխան փոխարժեքով:

Վանդակ «Լրացուցիչ տվյալներ».

Անհրաժեշտության դեպքում նշվում է ՄԱՀ-2-ում ներկայացված տեղեկություններին վերաբերող ցանկացած լրացուցիչ տվյալ (հաշվարկ):

Վանդակ «Ստորագրություն, կնիք».

Թերթը ստորագրվում է հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կողմից, եթե հայտարարագրումը կատարվում է մաքսային ներկայացուցչի կողմից եւ վավերացվում է սահմանված կարգով:

4-րդ մեթոդը եւ դրա հիման վրա 6-րդ մեթոդը

25. Ձեւ ՄԱՀ-2-ի երկրորդ թերթը 4-րդ, 6-րդ մեթոդների համար:

Վանդակ «Ապրանք թիվ».

Նշվում է ապրանքի համարն ապրանքների մասին հայտարարագրի համապատասխան վանդակից:

ՄՄ ԱՏԳ ԱԱ մեկ դասակարգման ծածկագրի նշումով մեկ ապրանքային խմբաքանակում պարունակվող տարբեր անուն ապրանքներ հայտարարագրելիս, երբ անհրաժեշտ է նշել տեղեկություններ՝ ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր կամ որոշ ապրանքների վերաբերյալ, նշվում է ապրանքի համապատասխան հերթական

համարը՝ ըստ ցուցակի:

Վանդակ «ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր».

Նշվում է ապրանքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի:

11-18ա վանդակներում ներկայացվող արժեքային ցուցանիշները նշվում են Մաքսային միության անդամ պետության արժույթով:

Վանդակ 11.

Նշվում է գնահատվող, նույնական կամ համանման ապրանքների միավորի այն գինը, որով դրանց ամենամեծ համախառն քանակությունն անփոփոխ վիճակում վաճառվում է Մաքսային միության մաքսային տարածքում վաճառք իրականացնող անձանց հետ չփոխկապակցված անձանց:

Այն դեպքերի բացակայության պարագայում, երբ գնահատվող, նույնական կամ համանման ապրանքները վաճառվում են այն նույն վիճակում, ինչպես որ դրանք ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք, հայտարարատուի կողմից տվյալ վանդակում նշվում է ապրանքի միավորի այն գինը, որով գնահատվող ապրանքների ամենամեծ համախառն քանակությունը դրանց վերամշակումից (մշակումից) հետո վաճառվում է Մաքսային միության մաքսային տարածքում վաճառք իրականացնող անձանց հետ չփոխկապակցված անձանց:

Բաժին Բ «Հանումներ՝ Ա բաժնում ներառված գումարներից».

Նշվում են Համաձայնագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան հանման ենթակա գումարները՝ հաշվարկված ապրանքի միավորի համար եւ ներառված Ա բաժնում նշված գումարի կազմում:

Վանդակ 12.

Նշվում է միջնորդին (գործակալին) սովորաբար վճարվող կամ վճարման ենթակա վարձատրության մեծությունը, կամ գնին հավելումները, որոնք սովորաբար կատարվում են շահույթ ստանալու ու առետրային եւ կառավարչական ծախսերը ծածկելու համար, այն չափով, որչափ այն սովորաբար սահմանվում է Մաքսային միության մաքսային տարածքում միեւնույն դասի կամ տեսակի ապրանքների

վաճառքի հետ կապված:

Վանդակ 13.

Նշվում է Մաքսային միության մաքսային տարածքում ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ սովորական ապահովագրական ծախսերի ու այդպիսի գործողությունների հետ կապված այլ ծախսերի մեծությունը:

Վանդակ 14.

Նշվում է մաքսատուրքերի, հարկերի, հավաքագրումների գումարը, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված հարկերը, որոնք ենթակա են վճարման Մաքսային միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման կամ տվյալ տարածքում դրանց վաճառքի առնչությամբ՝ ներառյալ Մաքսային միության անդամ պետությունների սուբյեկտների հարկերն ու հավաքագրումները եւ տեղական հարկերն ու հավաքագրումները:

Վանդակ 15.

Նշվում է Մաքսային միության անդամ պետությունում ապրանքների վերամշակման (մշակման) արդյունքում ավելացված արժեքը (նման գործողությունների իրականացման հետ կապված բոլոր ծախսումները, այդ թվում՝ ապրանքների բաղկացուցիչ մաս կազմող բաղադրիչների արժեքը, վերամշակման ընթացքում օգտագործված նյութերի արժեքը եւ այլն) այն դեպքում, երբ 11-րդ վանդակում հայտարարատուի կողմից ներկայացված է ապրանքների միավորի գինը՝ վերամշակումից հետո:

Վանդակ 16.

Նշվում է 12-15-րդ վանդակներում ներկայացված արժեքների գումարը:

Վանդակ 17.

Նշվում է գնահատվող (հայտարարագրվող) ապրանքների քանակը:

Վանդակ 18ա.

Նշվում է գնահատվող ապրանքների մաքսային արժեքը, որը հաշվարկվում է 11-րդ վանդակում նշված մեծությունից հանելով 16-րդ վանդակում նշված մեծությունը եւ ստացված մեծությունը բազմապատկելով 17-րդ վանդակում նշված մեծությամբ:

Վանդակ 18բ.

Նշվում է 18ա վանդակում ներկայացված՝ գնահատվող (հայտարարագրվող) ապրանքների մաքսային արժեքը, որը վերահաշվարկվել է ԱՄՆ դոլարով՝ մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագրի գրանցման ամսաթվի դրությամբ գործող համապատասխան փոխարժեքով:

Վանդակ «Լրացուցիչ տվյալներ».

Անհրաժեշտության դեպքում նշվում է ՄԱՀ-2-ում ներկայացված տեղեկություններին վերաբերող ցանկացած լրացուցիչ տվյալ (հաշվարկ):

Վանդակ «Ստորագրություն, կնիք».

Թերթը ստորագրվում է հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կողմից, եթե հայտարարագրումը կատարվում է մաքսային ներկայացուցչի կողմից եւ վավերացվում սահմանված կարգով:

5-րդ մեթոդը եւ 6-րդ մեթոդը՝ դրա հիման վրա

26. ՄԱՀ-2 ձեւի երկրորդ թերթը՝ 5-րդ, 6-րդ մեթոդների համար

Վանդակ «Ապրանք թիվ».

Նշվում է ապրանքի համարը՝ ապրանքների մասին հայտարարագրի համապատասխան վանդակից:

Ապրանքային մեկ խմբաքանակում ներառված, մեկ ՄՄ ԱՏԳ ԱԱ դասակարգման ծածկագրով նշված տարբեր անուն ապրանքներ հայտարարագրելիս, ցանկի յուրաքանչյուր կամ մի քանի ապրանքների համար տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտության դեպքում, ցանկում նշվում է ապրանքի համապատասխան հերթական համարը:

Վանդակ «ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր».

Նշվում է ապրանքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի:

Վանդակ 11.

Նշվում է գնահատվող ապրանքներ արտադրողի (վաճառողի) կողմից նյութերի պատրաստման եւ (կամ) ձեռքբերման ծախսերի եւ արտադրության ծախսերի,ինչպես նաեւ գնահատվող (ներմուծվող) ապրանքների արտադրության հետ կապված այլ գործողությունների կապակցությամբ կատարված ծախսերի ընդհանուր գումարը՝ ներառյալ տարայի եւ փաթեթվածքի ծախսերը (11ա եւ 11բ վանդակներ), ինչպես նաեւ Մաքսային միության մաքսային տարածքում կատարված նախագծման, մշակման, ինժեներական, կոնստրուկտորական աշխատանքների, դիզայնի, գեղարվեստական ձեւավորման, գծագրերի եւ էքսիզների համար արտադրողի կողմից վճարված արժեքը (11գ վանդակ), որին ավելանում է Մաքսային միության մաքսային տարածք արտահանելու համար արտահանման երկրում արտադրվող՝ գնահատվող ապրանքների նույն դասին կամ տեսակին պատկանող ապրանքների վաճառքին բնորոշ շահույթի եւ ընդհանուր (առետրային ու կառավարչական) ծախսերի գումարը:

5-րդ մեթոդի համաձայն՝ ապրանքների մաքսային արժեքի հաշվարկման համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները կարող են օգտագործվել միայն այն դեպքում, եթե դրանք սահմանված են հավաստի, քանակապես սահմանելի եւ փաստաթղթերով հաստատված տեղեկությունների հիման վրա:

Ապրանքների մաքսային արժեքը հաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկությունները պետք է հիմնվեն արտադրողի առետրային հաշիվների վրա՝ պայմանով, որ նման հաշիվները համապատասխանեն ապրանքների արտադրման երկրում կիրառվող հաշվապահական հաշվառման համընդհանուր սկզբունքներին:

Որպես նման տեղեկությունների փաստաթղթային հաստատում՝ հայտարարատուն իրավունք ունի ներկայացնելու անկախ կազմակերպությունների (ոլորտային ասոցիացիաների, ապրանք արտադրողների միությունների, առետրաարդյունաբերական պալատների եւ նմ.) փաստաթղթերը

(եզրակացությունները), որոնցով հաստատվում են հայտարարատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը ապրանքների արտադրության երկրի օրենսդրությանը, այդ թվում՝ նշված տեղեկությունների համապատասխանությունը արտադրության ծախքերի մակարդակին, ինչպես նաև Մաքսային միության մաքսային տարածք արտահանելու համար գնահատվող ապրանքների նույն դասին կամ տեսակին պատկանող ապրանքների վաճառքին բնորոշ շահույթի եւ ընդհանուր (առետրային եւ կառավարչական) ծախսերի մակարդակին:

Վանդակ 12.

Նշվում է գնահատվող ապրանքի գնորդի (ստացողի) կողմից դրա արտադրողին անվճար կամ իջեցված գնով, ուղղակի կամ անուղղակի տրամադրված ապրանքների եւ ծառայությունների՝ համապատասխան կերպով բաշխված արժեքը, որն օգտագործվում է արտադրության եւ Մաքսային միության մաքսային տարածք արտահանելու համար եւ ներառված չէ 11-րդ վանդակում նշված ծախսերում:

Վանդակ 12ա.

Նշվում է հումքի, նյութերի, մասերի, կիսաֆաբրիկատների եւ այլ նմանատիպ առարկաների՝ համապատասխան կերպով բաշխված արժեքը, որոնցից բաղկացած են գնահատվող (հայտարարագրվող) ապրանքները:

Վանդակ 12բ.

Նշվում է գործիքների, դրոշմակնիքների, ձեւերի եւ ներմուծվող ապրանքների արտադրության մեջ օգտագործված նմանատիպ այլ առարկաների ձեռքբերման ծախսերի համապատասխան կերպով բաշխված գումարը, եթե այդ առարկաները ձեռք են բերվել գնորդի (ստացողի) հետ փոխկապակցված անձ չհանդիսացող անձից, կամ դրանց պատրաստման հետ կապված ծախսերը, եթե առարկաներն արտադրված են գնահատվող ապրանքների գնորդի կամ գնորդի (ստացողի) հետ փոխկապակցված անձ հանդիսացող անձի կողմից:

Գնահատվող ապրանքների արտադրության ժամանակ օգտագործված՝ նշված

